Նոյնքան բնական է նաեւ, որ այդ պայմաններում, հայ ժողովրդի հայեացքն ուղղուէր դէպի Արեւմուտք եւ այնտեղից սպասուէր հարկաւոր օգնութիւնն ու պաշտպանութիւնը:

6·

Վերոյիշեալ պայմանները, Զուխայեցուց դեռ շատ առաջ, ստիպել էին հայ կեանքի ղեկավարներից ոմանց՝ մի ելք գտնել եւ հայ ժողովրդին իր ծանր վիճակից հանել: Այդ ելքը նկատուել էր Հայաստանի անկախութիւնը· իսկ միջոցը՝ Եւրոպայի, գլխաւորապէս Հռոմի, միջամտութիւնը:

Այսպէս· Յակոբ Զուղայեցուց ամբողջ մի դար առաջ Ստեփաննոս Ե· Սալմաստեցի կաթողիկոսն է հանդիսանում Հայաստանի անկախութեան գաղափարի առաջին ռահվիրան:

Մի «իմաստուն» եւ «գրասէր» մարդ էր նա, ծնուած Սալմաստում, բայց սնուած ու դաստիարակուած Պոլսում, «հմուտ բազում գիտութեանց եւ գիտակ բարբառոյ այլեւայլ ազգաց, եւս եւ լատինականին· որ եւ շրջեալ ի պատանեկութեան իւրում յաշխարհս հեռաւորս, մինչեւ յերկիրն լեհաց եւ մոսկովաց, առեալ էր տեղեկութիւն յոգունց իրաց» — այսպէս է ներկայացնում նրան Հ· Զամչեանը:

Նա գրականագէտ էլ էր եւ մի քանի աշխատութիւնների հեղինակ: Գրել է Յովհաննու Աւետարանի մեկնութիւնը, Քրիստոսի եւ Աւետարանիչների վարքը եւ այլ շատ գրքեր, «զորոց չունիմք տեղեկութիւն ի մասնաւորի» — ասում է նոյն պատմագիրը (Զամչեան, Գ· 517):

Ժամանակի այս աչքի ընկնող հոգեւորականը կաթողիկոսական աթոռը բարձրացաւ մի շարք դեղեցիկ ցանկութիւններով, որոնցից ամենաջերմն էր՝ «ծաղկեցուցանել բազում իրօք զաթոռն Էջմիածնի»: Բայց դժբախտաբար ոչինչ չկարողացաւ անել, «խռովալից եւ դժնեայ» օրերի հանդիպելով:

Կաթողիկոսներից շատերի նման՝ սա էլ չկարողանալով միայնակ տանել աթոռի հետ կապուած դժուարութիւնները, իրեն աթոռակից ձեռնադրեց Միքայէլ Սեբաստացուն, «զայր հաւատարիմ եւ զգօն», կաթողիկոսութիւնը թողեց նրան եւ ինքը հեռացաւ դէպի Պոլիս (1547 թ·):

Բայց իր գլուխն ազատելու համար չէր, որ նա թողեց Էջմիածինը: Ո՛չ· նա իր մտքում ունէր մի ծրագիր — Հայաստանի ազատագրութիւնը: Դեռ աւելի· նա գնում էր ոչ որպէս սոսկ անհատ, այլ որպէս պատգամաւոր պարսկական մասի հայութեան կողմից՝ եւրոպական արքունիքներում Հայաստանի ազատութիւնը որոնելու:

Հասկանալի է միանգամայն, որ ամենից առաջ իր քայլերը նա պիտի ուղղէր դէպի Հռոմ, ուր նստում էր «քրիստոնէութեան եւ բոլոր ճնշուածների» պաշտպանը, Քրիստոսի տեղապահը եւ Պօղոս-Պետրոս առաքեալների յաջորդը: Ուստի վերցնելով հետը մէկ արքեպիսկոպոս, մէկ եպիսկոպոս եւ այլ պաշտօնեաներ, Պոլսից ուղեւորւում է դէպի Հռոմ:

Զամչեանը այս ճամբորդութեանը տալիս է զուտ կրօնական բնաւորութիւն: Կաթողիկոսը «ցանկացաւ երթալ յուխտ սրբոյն Պետրոսի եւ Պօղոսի» — ասում է նա: Դեռ աւելի· հիմնուելով հռոմէացի պատմագիր Գուալտեր Արետինոսի վկայութեան վրայ, աւելացնում է· «Եցոյց Ստեփաննոս զհպատակութիւնն իւր զոր ունէր առ սրբազան Պապն եւ զմիաձայնութիւն ի բանս հաւատոյ»: Բայց մոռանում է, որ մի քիչ վերեւում բերել էր նոյն Գուալտերի խօսքերը Ստեփաննոսի մասին, որոնք բոլորովին այլ բան են ասում: Ինքը Գուալտերը շատ մօտ է եղել Ստեփաննոսի եւ նրա ուղեկիցների հետ· յաճախ լինում էր կաթողիկոսի մօտ եւ մտերմական խօսակցութիւններ ունենում նրա հետ· բայց երբ խօսքը գալիս էր կրօնական խնդիրներին, «բազում եւ ծանր վիճաբանութիւնք լինէին ի միջի մերում» — ասում է նա:

Պարզ է ուրեմն, որ, եթէ Ստեփաննոս կաթողիկոսի Հռոմ գնալու նպատակը եղած լինէր՝ իր հպատակութիւնը յայտնել Պապին եւ միաձայնութիւնը հաւատոյ գործերում, այդ դէպքում նրա եւ Գուալտերի միջեւ կրօնական հարցերում այլեւս «բազում եւ ծանր վիճաբանութիւնք» չէին լինի:

Միւս կողմից՝ անշուշտ Ստեփաննոս կաթողիկոսն էլ շատ լաւ գիտէր, որ այդ ճեւով երբեք չէր կարող հայոց եկեղեցու միութիւնը Հռոմի հետ գլուխ գալ: Այդպիսի փորձեր չա՞տ էին արուել, գուցէ չա՞տ կաթողիկոսներ էին Հռոմ գնացել, Հռոմի հետ բանակցու-